

# ՄԷՃՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

DIRECTION DU JOURNAL  
MEDJMOUA-I-AHBAZ  
65, Grandrue de Péra, Taxisin, 65

ԱՊՐԱՆԻ ԶԵՆՈՒԹՅՈՒՆ  
ՍԵՒՆԻԿԻ 6 ալիքով  
Երևանի լիցի  
Փարսի 60 35  
Սեմալիկի 85 45  
Ֆրանկ 20 10

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՐԱՅԻՄԻ  
ԿԵՆՏՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ  
Երևանի լիցի արքայապետական

مجموعه اخبار  
بک اوغلی تقسیم جاده سی و نهم  
13 Մայիս 1910

## ՊԱՏՄԱԿԱՆ-ԵԿԵԼԵՑԱԿԱՆ

Կրկնիկի Կաթողիկոսությունը, 1742 թվականին բարեկապական Բենեդիկտյան Բանայապետության կողմից ընդունված և հրատարակված է, իբրև իր արևելյան Պատրիարքաց միություն իրաւամբ և արտոնութեամբ, միևնոյն ձեռնահաստեղծութեամբ և արժանապատուութեամբ մինչև 1866. այս 124 տարւոյն միջոցին մէջ ութ Կաթողիկոսներ նստած են Կրկնիկի աստուածապահ Աթոռոյն վրայ յաջորդաբար միևնոյն իրաւամբ և միևնոյն ոգով Լիբանանէ բարձանց վրայ: Զմառ կոչուած Տիրամօր Կոստին վանքին մէջ:

Ի վախճանելն երջանկայնատակ Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսի, հին կարգերը և օրէնքները բոլորովին փոխուեցան և նոր Կաթողիկոսութիւն մը հաստատուեցաւ և տեւեց մինչև ցարդ:

Ի ԿԵՆՏՐԱԿԱՆ Կոչուած Բանայապետական կոնգրակին զօրութեամբ նորահար ձեռով ընտրեալ Կաթողիկոսը կարող չէ գահակալել և ի սովորութիւնէ ստանձնեալ իշխանութեամբ և արտոնութեամբ ճօխանալ մինչև որ պաշտօնապէս չի հաստատուի իր ընտրութիւնը Հոգովայ կօշմանք, և մինչև որ Պաշտօնը չընդունէ: չի կրնար եպիսկոպոս օծել, կղեր ձեռնադրել, ժողով գումարել, միւսոն և եկեղեցի օրհնել, ոչ այսչափ միայն այլ և Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը բոլորովին և բացարձակապէս զրկուած է Կաթողիկոսի և Եպիսկոպոսաց ընտրութեանց միջամտութեան: ազգը և հասարակութիւնը ամէն կերպով ընդդիմացաւ Ռէվէրենդիսիմոսի նորատեսակ արամադրութեանց և այս պատճառաւ ալ ժամանակին տեղի ունեցաւ բաժանումը, որուն ցաւալի հետեւանքները ամենուն արդէն ծանօթ են, և որովհետեւ ընդհանուր Կաթողիկոսութիւնը Կ. Պօլսոյ Պատրիարքութեան հետ և Գաւառական եպիսկոպոսութիւնն ալ քաղաքական առաջնորդութեան հետ կապուած են այժմ անբաժանելի եղանակաւ և որովհետեւ Օսմ. Հայ հասարակութիւնը թէ պատրիարքական և թէ գաւառական գործառնութեանց առթիւ շարունակ չի ման մէջ է Կ-Պատրիարքի և Եպիսկոպոս Առաջնորդի հետ, այս պատճառաւ ալ այն հոգեւոր իշխանութեանց կարգման համար Կառավարութեան չնորձած արտօնութեամբ իրաւունք կը վայելէր հասարակութիւնը ընտրութեան ձեռնարկելու: Ս. Գահը հոսկ ուրեմն ճանչցաւ Հասարակութեան այս իրաւունքը, ուստի և բարեկապական Լիւնոն Ժ. Բանայապետը հրամայեց որ Կ-Պատրիարքի և Եպիսկոպոս-Առաջնորդաց կարգման ժամանակ Հասարակութիւնը ի գործ դնէ ընտրութեան իրաւունքը, և այս արամադրութիւնը և կարգադրութիւնը հոգեւոր Ազգական Կ-Պատրիարքի օրով, 1888ին, Ազգ. Կանոնադրութեան մէջ իբր պայման արձանագրուեցաւ, իսկ Ռէվէրենդիսիմոսի մնացած արամադրութիւնները գործադրելի մնացին ցարդ:

Այս օրերս առնուած մասնաւոր տեղեկութեան համեմատ, Ս. Բանայապետը արտօնած է որ նորընտիր, ըստ մեզ հինընտիր Թէրզեան Կ-Պատրիարքը, Պաշտօնը բաւական չընդունած, աւելի մնացած

Նախկին իրաւունքները և իշխանութիւնները ի գործ դնէ. և թէ այս տեղեկութիւնը ստույգ է, ըսել է թէ բարեկապական Պիոս Թ. ի ստուած Ռէվէրենդիսիմոսի կողմէն մեկ մասը, այսինքն ընտրութեանց մասը Լիւնոն Բանայապետը փոխած է ի չնորհա Հասարակութեան, և Պիոս Ժ. Բանայապետն ալ մնացած մասը, այսինքն Կաթողիկոսական իշխանութիւնը բոլորովին ազատ թողած է. ըսել է Ռէվէրենդիսիմոսի կողմէն զօրութեամբ և ծանրութեամբ ընտրութիւն վերցուած է թէ Կ-Պատրիարքի և թէ Հասարակութեան վրայէն: Ուստի օրինաւոր և ազգովին ընտրեալ նորընտիր կամ հինընտիր Պօղոս-Պետրոս Ժ. Թէրզեան Կ-Պատրիարքն կարող է այսուհետեւ իր ձեռնհասութեամբ և ի վաղուց հետէ ծանուցեալ իշխանութեամբը:

Նախ. Արքեպիսկոպոս և Եպիսկոպոս ձեռնադրել և անոնց կարգաւորեալ վիճակ և թեմ յատկացնել. (Լամբ. Մեկնութիւն Պատարագի):

Բ.— Հրաման տալ երեք եպիսկոպոսաց որ եպիսկոպոս մը ձեռնադրեն, բայց իրեն վերապահելով անոնց եմփօրոն և կարգաւորել վիճակ չնորհելը. (Նիկ. Ժողով):

1754ին Բենեդիկտոս մեծիմաստ Բանայապետը իրաւունք և խափան յանդիմանած էր այն Սիւնիոգոսական ժողովը, որ Յակոբ Պետրոս Երկրորդ Կաթողիկոսի յաջորդը ընտրելով պարզ քանոնայ մը, թէ նոյնընտիր եպիսկոպոս ձեռնադրած և թէ միանգամայն վիճակ որոշած էր: Ս. Բանայապետը յանդիմանած էր Սիւնիոգոսը ոչ եթէ պարզ քանոնայ մը ընտրած և եպիսկոպոս ձեռնադրած, այլ միմիայն առանձին վիճակ որոշած ըլլալուն համար, որ միայն Կաթողիկոսի վերաբերեալ է: Այս յանդիմանութեան վրայ երբ Միքայէլ Գ. Պետրոս կը վախճանէր, Սիւնիոգոսը դարձեալ պարզ քանոնայ մը ընտրեց և եպիսկոպոս ձեռնադրեց Բարսեղ Պետրոս Գ. անուամբ առանց վիճակ տանմանելու:

Գ.— Ժողովով եպիսկոպոսաց կանոնական պատիմներով պատժել յանցաւոր եպիսկոպոս մը, լուծանել իր իշխանութեանէ նաեւ պատուէն հոգեւոր կամ մարմնաւոր հիւանդութեան համար. (Հազար Զանկեցի և Միսիթ. Գօշ):

Այսպէս Գրիգոր Պետրոս Զ. Կաթողիկոսը Զմառ մեծաստանին մէջ արգիլեալ պահեց իրիկոյ Արքանաթ Եպիսկոպոսը:

Դ.— Եկեղեցւոյ օգտին կամ հարկաւորութեան համար, ժողովով կամ հաւանութեամբ եպիսկոպոսաց, եպիսկոպոս մը մէկ եկեղեցին միւս եկեղեցւոյ վրայ փոխադրել. ինչպէս որ Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսը՝ Մերտինի Զարայեան Յովսէփ Արք. ին տեղ Գարբէլ Արք. ձեռնադրեց:

Ե.— Երեք տարին միանգամ իր կողմէն նուիրակ կամ քննիչ հանել իրեն իրաւաւորութեան պատկանեալ եպիսկոպոսական թեմերուն և վիճակներուն մէջ, տալով անոնց իշխանութիւն ուղղելու ամէն բան ըստ կարգի և օրինաց. (Հազար Զանկեցի):

Զ.— Հրատարակել կամ հրաման հանել ժողովոյ ընդ ամենայն զաւառ, վիճակ և ազգ իւր, ժողովական գիր գրել ուրիշ Պատրիարքներուն. (Լամբ.):

Այսպէս Գրիգոր Պետրոս Ը., 1851ին

Սիւնիոգոս գումարեց ի Լիբանան, Զմառ եկեղեցական բարեկարգութեանց համար, և միանգամայն ճառելու համար այնպիսի նիւթերուն վրայ, որոնք օգտակար և չափաւոր կրնան ըլլալ օր քան զօր աւելի պայծառացնելու Եկեղեցին և Ազգը:

Է.— Եպիսկոպոսներէն, քանոնային ինչպէս նաեւ և ժողովուրդէն հաս կամ տուրքաւորանջիլ. (Կանոն Սոյ 1243). այսպէս Լիբանանու Կաթողիկոսները Տիրապէքի, Մարտինի և վերջերս ալ Եւթիկիոյ վիճակներէն իրենց հասը կ'ընդունէին:

Ը.— Արգիլել եպիսկոպոսաց, որ իրենց վիճակին մէջ երեւելի գործ մը չընեն առանց իր կամաց և հաճութեան. (Միսիթ. Գօշ.):

Թ.— Նոյնպէս իր ժողովով եկեղեցւոյ կարգերը և կարգադրութիւնները ուղղել և օրագրել, աւելորդները վերցնել, թերին և պակասը լեցնել ըստ ուղղամիտ վարդապետութեան. (Լամբ.):

Ժ.— Իւրաքանչիւր նահանգի և վիճակի մը մէջ եղած վէճերը և որոշուած վիճակները նորէն քննել, հաստատել զանոնք կամ տկարացնել. (Լամբ.):

ԺԱ.— Մինչդէռ, ժողովով կամ հաւանութեամբ եպիսկոպոսաց հրաման տալ եպիսկոպոսի որ հրաժարի իր թեմէն կամ վիճակէն՝ հիւանդութեան պատճառաւ և կամ կրօնաւորութեան համար. (Հազար Զանկ):

ԺԲ.— Կանոն և օրէնք դնել և սահմանել, զորս պարտաւորին պահել ամեն արքեպիսկոպոսութեան և եպիսկոպոսութեան. (Լամբ. և Շնորհ.):

ԺԳ.— Ըստ իրաւանց հիմնել և հաստատել կրօնական կարգ և միաբնակութիւն, տալով անոնց կրօնաւորական օրէնք և սահմանադրութիւն, այսպէս Բարսեղ Պետրոս Գ. Կաթողիկոսը Զմառեան միաբնակութեան հիւրը դրաւ. Գրիգոր Պետրոս Ե. ալիւալ օրէնքներով զարդարեց, և Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսը զանազան արտօնութիւններով ճեղացուց:

ԺԴ.— Եկեղեցի մը կամ վանք մը ու ինչ կարգաւոր եպիսկոպոսի իրաւասութիւնէ զերծ պահել, իր ամիջական իրաւասութեան տակ առնելով, ինչպէս Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսը իր անմիջական իշխանութեան տակ առաւ Եւթիկիոյ ուսումնասիրութիւնը:

ԺԵ.— Եպիսկոպոսաց թեմերուն մէջ առանձին փոխանորդներ կարգել. ինչպէս Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսը Կ-Պօլսոյ Նախագահական թեմին մէջ փոխանորդ դրաւ հակառակ այնքան ընդդիմութեանց և դժուարութեանց:

ԺԶ.— Եպիսկոպոսաց կողմանէ բանադրեալները և արգիլեալները արձակել. (Բենեդ.):

ԺԷ.— Տնօրինել այն անկանոնութիւնները, որոնք կրնային խափանել ձեռնադրելեաց ընդունելութիւնը: (Սոյ ժողովը քանոնայական կարգի համար որոշած էր 25 տարին. իսկ եպիսկոպոսաց համար 33):

ԺԸ.— Ամուսնութեանց եղծիլ և խաբանարար արգիլքները սնօրինել:

ԺԹ.— Հրաման տալ պարզ քանոնային որ Եկեղեցւոյ սեղանը օրհնեն, սկիւ օծեն, չորս փոքր աստիճաններ տան, հանդիսութեանց ատեն թագ և գաւազան գործածեն, հաճութեամբ տեղական եպիսկոպոսին:

Ի.— Միւսոն օրհնել և հրաման տալ Եպիսկոպոսաց որ միւսոն օրհնեն:

ԻԱ. Պատժել եպիսկոպոսները՝ որոնք հրաւիրեալ ի ժողով, առանց ծանուցանելու կանոնական արգելքը, չեն ներկայանար: Կ-Պատրիարքն, ինչպէս նաեւ եպիսկոպոսներ, քանոնային և ժողովուրդը ունեն և կը վայելեն զանազան արտօնութիւններ և իրաւունք, զորս ի հանդիպիլ յարմար առթի պատրաստ է հրատարակել:

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՄՆ

13 Մայիս 1910

## ԿՐԵՐԱՄԱՐՏ ՅՈՂՈՒՍԴԱԳԻՐ ՄԸ

ՆԻ ԻՐ ԳԵՂԵՑԻՎ ԳՈՎԵՍՏՆԵՐԸ

ԱՌ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՆ

Ա.

Ընդհանուրին հետ մենք ալ կ'զգանք խորին պէտքն աւելի վիճաբանութիւն խորհելու, հետաքննելու մենք տարածայնութեան ո'ւնէ նիւթ ու խնդիր, և ազգովին վայելելու ընդ երկար այն խաղաղաւէտ, կաղաւթիչ և բարեբաւ տպաւորութիւնն, որ մեր սիրելի և քաղաքիւն Հոգւոսապետին ընտրութեան առաջին պատուէն եղաւ: Փոքեց երեք ընտրութիւն մ'առաջի ուրախութիւնն ծնուցած չլինի ամբողջ Հասարակութեան մը, և նոյն իսկ բովանդակ երկրի մը ալազան տարեց մէջ: Կաթողիկէ Հայոցս գոհունակութիւնը չափ ու սահման չունի. բաց աստի, հայ յոյն, իսլամ, եւրոպացի, և ինչ ամենքն ալ առանց խաղաղութեան ցեղի ու կրօնի՝ շերտապէս խնդալից են մեզ մեր այս փայլուն յաջողութեան համար: Ուր որ Ամեն. Թէրզեանի անունն լսուած է, ընդհանուր ցնձութիւն կը արեւ. Իտալիա, Ֆրանսա, Պելճիքա, Հօլանտա, Աւստրիա, Լիհտաւանիա ևն չնչն մեծ Հայոցն և երկնաշունչ Առաքելային գովեստութեան և բարեմաղթութիւններով: Իրօք իբրեւ հայ և իբրեւ քրիստոնեայ պէտք է սրբապէս հպարտ լինինք, և մեր անմոռանալի երախտագիտութեան միմեծն սրտագին բարձրացընենք անդու առ Գերագոյն Տոնին ամեն բարիքներու:

Նւ մեր երախտագիտութիւնն պէտք է լինի այնչափ աւելի խորին և տեսական, որչափ այն ընդունուած բարւոյն հետեւանքներն անմիջ կը թուին լինել հրաշալի կերպիւ վրկաւէտ և բազմաբեղուն: Անձինք որոց բերնէն բաւ մը երբեք չէր ելած ի նպաստ Կաթողիկէ կղերին, հաճախութեամբ և պատկառանք կը խօսին Թէրզեան Կաթողիկոսի նկատմամբ: Թերթեր որոցմէ թոյն կը ժայթքէր հանապաղ ընդդէմ Կաթողիկէ Նուիրապետութեան, չողջողուն ներքող կը հիւսնեն իւր պանծալի անուան: Գրագէտներ որոնք սովորէին կրօնը ու կրօնաւոր շննայիլ, և իօժէն Սիւնի հեշտալի ստույթները նետել մեր ճակտին, կը բարձրանան Դէնի կամ Կիզի մը անկողնակալութեան, անկողն չեղանք լսելի կ'ընեն, և հրապարակ կ'իջնեն այսօր դաւիթի պատկ ի ձեռին: Ահա՛ երեւոյթ մը որ մեծապէս նշանակելի է, որ պարտի յանձնու հրճուեցնել զմեզ, եթէ իրօք մեր անձինքն աւելի կը սիրենք կրօնը ու սորա ներքին ու արտաքին պայծառութիւնն:

Վարդեմէք հետեւեալ տողերու քաղց-

(\*) Բիւզանդիոն, 1910 Մայիս 4:

Թ. Վ. ԺԱՄԺԵԱՆ  
Ատանա, 3 Մայիս 4, 8. 1910

Մուհաբբերի մեղաւէ, պու սառլըլարա-  
տան սօնրա, էլմիտաին Ս. Կաթողիկո-  
սընտան, պու պապտէ քէնտիսինտէն պէք-  
լէնէն իւմիտէրի միւմքին մէրթկպէ ֆիր-  
լէ կէթրմէսինէ ինթիպարէն, պուրատա  
բաթրիք Դուրեան Սրբազանն, Վարչու-  
թիւն իլէ պիլ իսթիշարէ, վէ էրմէնի Իրօ-  
թէթմանլարըն տախի տալէթ իտէրէք  
Ատանատան, Թէրզեան Կահաթրիկի Իս-  
թանպուս կէթրմէք վէ պուրատա միւշա  
րիւմէի իսթիւքպալ իյլէմէք իւզըրէ թէշը  
օլունմըջ օլան էրմէնի-գաթօլիք երեսփո-  
խանլարընտան միւրէքքէպ գօմիսիօն իլ  
միւթթէֆիքլէն, ումոււ էրմէնիլիք (Հայ  
համագգային) նամընա բարաւք պիլ գա-  
պուլլիյթ ինքա իսիլմէսիւն թէշըֆ իսիլ  
եօր, վէ իւլմէթիւն տէեօր քի, «Պուս իլ-  
գէլ հարէթթէթին նէ» կլիպ ֆայտէլի նէլի  
գէէթի օլանաղը հագգընտա թաթվիլի քէ-  
լամա իւղղոււ եօք տըր, ազ չօք սահիպ  
միւլհահա՞ա՞ պոննու ընք չաղուգ անլահա  
պիլիլ: Ծու գատար սէօլլէրիւ քի, պի-  
միւշասիի նիւմայիշի ուխուլվէթի կէօր  
էրմէնիլիկին սպմիմ տօսթլարը, էրմէն

ՄԵԾՍՈՒԱՆ. — Րէֆրզիմը թէքլիֆ  
վէ թէմէնի եւ թընա թէշէքքւրլէ պէրա-  
պէր ան սամիմ իյթիրաք իսէրիզ :

Ամեն. Կ-Քաթրիկոսիդ թարափն  
տան պաղը մահչլէրէ հաղըան մէջԹու  
լարտա, էգճիւշէ Երեսի. ժողով Առեհա  
պետի Արամ էջ. Երամեանա հաղըրպ  
թաղար իրթնի կէճէթի առ ուղեւան Մճ



Ի Տ Ա Ր Է Խ Ա Ն Է  
Պէյօղլունես Թագսիմ ճաստսիսէ Դ. 65  
Միւտրը մետուր զագերս  
ԹՈՂԱՑԵԱՆ